ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1227-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՐԳՈ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 90 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԱԶՄԻԿ ԼԵՎԻԿԻ ՄԱՐՏՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 02.03.2023թ. տրված Կարմիրգյուղ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 17.04.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 17.04.2023թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Ռազմիկ Լևիկի Մարտոյանի /ծնված 14.01.1969թ./ լիազորված անձ Լևոն Ռազմիկի Մարտոյանի /ծնված 30.08.1992թ-ին/ դիմումը, որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 29.05.2023թ. տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023AF29EL ծածկագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրի Սերգո Ավետիսյան փողոց թիվ 90 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.11 հա, ինչը փաստացի կազմում է 0.10396 հա, որը Ռազմիկ Լևիկի Մարտոյանին /ծնված 14.01.1969թ./ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 217.62 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1960-2015թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.10396 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, *որոշում եմ*

1. Վերականգնել Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրի Սերգո Ավետիսյան փողոց թիվ 90 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ռազմիկ Լևիկի Մարտոյանի /ծնված 14.01.1969թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.10396 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 181.22 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1960-1990թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. 2015թ. ինքնակամ կառուցված 8.5 քմ արտաքին /7.9 քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը՝ 1 /մեկ/ քառակուսի մետրի համար 1028 /մեկ հազար քսանութ/ ՀՀ դրամ, ընդամենը 8.5x1028=8800 /ութ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ, և 31.2 քմ արտաքին /28.5 քմ ներքին/ մակերեսով մարագը և հավաբույնը՝ 1 /մեկ/ քառակուսի մետրի համար 616.8 /վեց հարյուր տասնվեց ամբողջ ութ տասնորդական/ ՀՀ դրամ, ընդամենը 31.2x616.8=19300 /տասնինը հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարներով ճանաչել օրինական:
3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Կարմիրգյուղ բնակավայր, Սերգո Ավետիսյան փողոց, թիվ 90 հասցեն:
4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

2023թ. հունվարի 08
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1228-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 20-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԽԱԿ ՀՐԱՆՏԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ, ՍԵԴԱ ԼԵՎԻԿԻ ԲԱՂՈՅԱՆԻ, ՀՐԱՆՏ ՄԵԽԱԿԻ ԻՍՐԱԵԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 11.05.2023թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, Գավառ համայնքի Հացառատ թաղամասի Հենրիկ Աբրահամյան 3-րդ փողոց 20-րդ նրբանցք թիվ 3 հասցեի համասեփականատեր Մեխակ Հրանտի Իսրայելյանի /ծնված 21.01.1964թ./ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի Հացառատ թաղամասի Հենրիկ Աբրահամյան 3-րդ փողոց 20-րդ նրբանցք թիվ 3 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.15 հա, ինչը փաստացի կազմում է 0.18000 հա, որը Մեխակ Հրանտի Իսրայելյանին /ծնված 21.01.1964թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 238.00 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 2000թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.18000 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, *որոշում եմ*

1. Վերականգնել Գավառ համայնքի Հացառատ թաղամասի Հենրիկ Աբրահամյան 3-րդ փողոց 20-րդ նրբանցք թիվ 3 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մեխակ Հրանտի Իսրայելյանի /ծնված 21.01.1964թ-ին/, Սեդա Լևիկի Բաղոյանի /ծնված 20.08.1969թ-ին/, Հրանտ Մեխակի Իսրաելյանի /ծնված 16.09.1988թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.15 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.003 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.18000 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 238.00 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 2000թ./նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Հացառատ թաղամաս, Հենրիկ Աբրահամյան 3-րդ փողոց, 20-րդ նրբանցք, թիվ 3 հասցեն:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

2023 թ. հուլիսի 08
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1229-Ա

ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ և 38-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2) կետի, ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 631-Ն որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության» 9 կետի 4) ենթակետի «գ» պարբերության դրույթներով, հաշվի առնելով իր անչափահաս որդու՝ Վաչիկ Հովհաննեսի Զազյանի բաժնեմասը վաճառելու թույլտվություն ստանալու մասին Գավառ համայնքի բնակիչ Լենա Ռուդիկի Վարպետյանի դիմումն ու հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 07.06.2023թ. արձանագրությունը, *որոշում եմ*

1. Թույլատրել Գավառ համայնքի բնակիչ Լենա Ռուդիկի Վարպետյանին (անձնագիր AS0235395, տրված 19.06.2018թ.) վաճառել Գավառ քաղաքի Ազատության 2-րդ փողոց 2-րդ անցում N85 հասցեում գտնվող աշարժ գույքի՝ իր անչափահաս որդի Վաչիկ Հովհաննեսի Զազյանին (անձնագիր՝ AS 0235388, տրված 19.06.2013թ.) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 1/8 բաժնեմասը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

2023թ. հունիսի 12
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1230-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Ռուբեն Ավետիքի Ասոյանին, Թագուհի Ռուբենի Ասոյանին, Մարիամ Ռուբենի Ասոյանին, Գայանե Ռուբիկի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից հրաժարվելու մասին դիմումը, *որոշում եմ*

1. Քաղաքացիներ Ռուբեն Ավետիքի Ասոյանին, Թագուհի Ռուբենի Ասոյանին, Մարիամ Ռուբենի Ասոյանին, Գայանե Ռուբիկի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ հասցեում գտնվող 0.078 հա մակերեսով 05-001-1178-0454 կադաստրային ծածկագրով, 0.446 հա մակերեսով 05-001-1164-0017 կադաստրային ծածկագրով, 0.359 հա մակերեսով 05-001-1170-0048 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 1.106 հա մակերեսով 05-001-1101-0078 կադաստրային ծածկագրով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

2023թ. հունիսի 12
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1231-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Սաշա Բալաբեկի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից /վկայական N04052023-05-0097 տրված 2017 թվականի հուլիսի 10-ին, վկայական N04052023-05-0087 տրված 2017 թվականի հուլիսի 10-ին, / հրաժարվելու մասին դիմումը, *որոշում եմ*

1. Քաղաքացիներ Սաշա Բալաբեկի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Գեղարքունիք հասցեում գտնվող 0.0908 հա մակերեսով 05-025- 0701-0411 կադաստրային ծածկագրով, 0.137 հա մակերեսով 05-025-0702-0004 կադաստրային ծածկագրով խոտհարքները ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

2023 թ. 06 12
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1232-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Ֆելիքս Գրիգորի Հովհաննիսյանին, Մանյա Միհրանի Խաչատրյանին, Կարեն Ֆելիքսի Հովհաննիսյանին, Արմեն Ֆելիքսի Հովհաննիսյանին, Աննա Ֆելիքսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից /վկայական N06062023-05-0062 տրված 2023 թվականի հունիսի 6-ին, վկայական N06062023-05-0004 տրված 2023 թվականի հունիսի 6-ին, վկայական N06062023-05-0068 տրված 2023 թվականի հունիսի 6-ին, վկայական N06062023-05-0002 տրված 2023 թվականի հունիսի 6-ին, վկայական N06062023-05-0061 տրված 2023 թվականի հունիսի 6-ին, վկայական N06062023-05-0105 տրված 2023 թվականի հունիսի 6-ին / հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Ֆելիքս Գրիգորի Հովհաննիսյանին, Մանյա Միհրանի Խաչատրյանին, Կարեն Ֆելիքսի Հովհաննիսյանին, Արմեն Ֆելիքսի Հովհաննիսյանին, Աննա Ֆելիքսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ հասցեում գտնվող 0.116 հա մակերեսով 05-001-0660-0018 կադաստրային ծածկագրով, 0.376 հա մակերեսով 05-001-0661-0012 կադաստրային ծածկագրով, 0.0814 հա մակերեսով 05-001-0671-0033 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 0.2506 հա մակերեսով 05-001-0694-0137 կադաստրային ծածկագրով, 0.074 հա մակերեսով 05-001-0000-0000 կադաստրային ծածկագրով, 0.025 հա մակերեսով 05-001-0694-0126 կադաստրային ծածկագրով խոտհարքները ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

2023 թ. 06 12
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1233-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 12-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՆԱՐԻԿ ԳՐԻԳՈՐԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ, ԽԱՉԱՏՈՒՐ ՄԵԼՍԻԿԻ ՔՈԼՈԶՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՆՇՎԱԾ ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.04338 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2 և 3 կետերի պահանջներով, 28.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 02.06.2023թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 04.10.2011թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Քնարիկ Գրիգորի Ամիրխանյանի /ծնված 11.04.1947թ./ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի Բարեկամության փողոց 12-րդ նրբանցք թիվ 10 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.06 հա, ինչը փաստացի կազմում է 0.11538 հա, որից 0.07200 հա հողատարածքը օրենքի ուժով հանդիսանում է Քնարիկ Գրիգորի Ամիրխանյանին /ծնված 11.04.1947թ./ ժառանգության իրավունքով պատկանող հողամասը, իսկ դրան կից փաստացի ավել օգտագործվող 0.04338 հա հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և ուղղակի վաճառքի կարգով՝ 1 քմ-ի համար հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 366.3 ՀՀ դրամ, օտարել նշված հասցեի գույքի նկատմամբ ժառանգ Քնարիկ Գրիգորի Ամիրխանյանին /ծնված 11.04.1947թ./ և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 451.20 քմ մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1984-1988թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.11538 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ,

որոշում եմ

1. Վերականգնել Գավառ համայնքի Բարեկամության փողոց 12-րդ նրբանցք թիվ 10 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Քնարիկ Գրիգորի Ամիրխանյանի /ծնված 11.04.1947թ-ին/, Խաչատուր Մելսիկի Քոլոզյանի /ծնված 08.10.1970թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված 0.06 հա մակերեսով հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.012 հա հողամասի գույքային իրավունքները ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.07200 հա մակերեսով հողամասի և օրինական կառուցված 451.20 քմ մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1984-1988թթ-ին/ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Գավառ համայնքի Բարեկամության փողոց 12-րդ նրբանցք թիվ 10 հասցեում գտնվող 0.07200 հա հողատարածքին կից փաստացի ավել օգտագործվող 0.04338 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Գավառ համայնք, Բարեկամության փողոց, 12-րդ նրբանցք, թիվ 10/1 հասցեն և ուղղակի վաճառքի կարգով օտարել Քնարիկ Գրիգորի Ամիրխանյանին /ծնված 11.04.1947թ-ին/, Խաչատուր Մելսիկի Քոլոզյանին /ծնված 08.10.1970թ-ին/ հողամասի 1 քմ-ի համար կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 366.3 /երեք հարյուր վաթսունվեց ամբողջ երեք տասնորդական/ ՀՀ դրամ՝ ընդամենը 433.8x366.3=159000 /մեկ հարյուր հիսունինը հազար/ ՀՀ դրամ Գավառի համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին վճարելու պայմանով:
3. Բնակելի տանը տրամադրել Գավառ համայնք, Բարեկամության փողոց, 12-րդ նրբանցք, թիվ 10 հասցեն:
4. Հանձնարարել աշխատակազմի համապատասխան աշխատակցին՝ օրենքով սահմանված կարգով Քնարիկ Գրիգորի Ամիրխանյանի /ծնված 11.04.1947թ-ին/, Խաչատուր Մելսիկի Քոլոզյանի /ծնված 08.10.1970թ-ին/ հետ կնքելու 0.04338 հա մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:
5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
6. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

20.23թ. Դեկտեմբեր 12
ք.Գավառ